

28.08.2018թ.

ժ.11:00

*Մասնակցում էին՝ Ս.Մասցականյան (խորհրդի նախագահ), Ն.Բաղդասարյան, Լ.Պետրոսյան, Ս.Դավթյան, Ա.Սաֆյան (խորհրդի անդամներ), Հ. Գրիգորյան (խորհրդի քարտուղար)
Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան, Վարդանյան, Գ.Թորոսյան:*

Օրակարգի նախագծում երեք հարց.

1. «Հեռուստատեսության տեխնիկական միջոցների մասին» ձև 50-կապ (տարեկան) վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևն ու լրացման ցուցումը հաստատելու և «ՀՀ ՎՊԽ 2014 թվականի ապրիլի 7-ի թիվ 12-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Գ.Թորոսյան/

2. «Միավորված ազգերի կազմակերպության պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքները և Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի սկզբունքները Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեում կիրառելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 83-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Սաֆյան/

3. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Քվեարկության արդյունքները-կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

«Հեռուստատեսության տեխնիկական միջոցների մասին» ձև 50-կապ (տարեկան) վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևն ու լրացման ցուցումը հաստատելու և «ՀՀ ՎՊԽ 2014 թվականի ապրիլի 7-ի թիվ 12-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Գ.Թորոսյան/

Որոշեցին՝

1. հաստատել «Հեռուստատեսության տեխնիկական միջոցների մասին» Ձև 50-կապ (տարեկան) վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը և ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2014 թվականի ապրիլի 7-ի «Հեռուստատեսության, ռադիոհեռարձակման տեխնիկական միջոցների մասին» Ձև 51-կապ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 26-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 12-Ն որոշումը:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի մարտի 1-ից:

/Նորմարիվ/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

2. «Միավորված ազգերի կազմակերպության պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքները և Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի սկզբունքները Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեում կիրառելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 83-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Սաֆյան/

Որոշեցին՝

1. Առաջնորդվել բացառապես ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի կողմից 1994 թվականին հաստատված և 2013 թվականին վերահաստատված պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներով և դրանց վրա խարսխված Եվրոպական վիճակագրական համակարգի կոմիտեի կողմից 2017 թվականի նոյեմբերի 16-ին ընդունված

Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի սկզբունքներով և այդ սկզբունքները կիրառել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի գործունեությունում:

2. Տեղեկացնել Հայաստանի Հանրապետությունում վիճակագրական գործունեությամբ զբաղվող բոլոր հաստատություններին (պետական մարմիններին, այդ թվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին), որ պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքները և Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի սկզբունքները հանդիսանում են պաշտոնական վիճակագրությունում պարտադիր պահանջ:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 2-ի «ՄԱԿ-ի պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքները և եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի սկզբունքները Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեում կիրառելու մասին» թիվ 83-Ա որոշումը:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ 5, դեմ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ